


ՊԱՏՄԱ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



Ա. ՖԱՇԵՅԵՎ  
ԻՆՉՊԵՍ ԶՈՀՎԵՖ  
ՍԵՐԳԵՅ ԼԱԶՈՆ

087-1  
\$-14

ՊԱՏՄԱ

Ա. ՖԱԴԵՅՎ 23 JUN 2009

0871

Ֆ-14

"ար"

# ԻՆՉՊԵՍ ԶՈՀԿԵՑ ՍԵՐԳԵՅ ԼԱԶՈՆ

Թուս. 2-րդ նրատարակությունից քարգմանել

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԹԵՏՐԱԿԱՆ

ԼԿԱՅԵԼ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱԿՈՒՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1939

ԻՆՉ ԵՅԻՆ ԱՆՌՈՒՄ ՃԱՊՈՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՏՆԵՐԸ  
ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

1918 թվի հունվարի 12-ին, գեղատեսիլ ծովախորշի չուրջը բոլորած լեռների վրա փոշած Վլադիվոստոկ քաղաքի բնակիչները խարսխակայանում կանգնած տեսան ճապոնական «Խվամի» հածանավը։ Սև ծուխը քուլա-քուլա բարձրանում եր նրա ծխնելույզներից։

Զմեռ եր։ Սառցահատները ծովախորշի սառույցը կտրել եյին։ Սառցամեղքերից վարդագույն գոլորշի յեր բարձրանում։

Մի քանի որից հետո «Խվամի» հածանավի կողքին կանգ առավ անգլիական «Սուֆֆոլկ» հածանավը։

Ապրիլի 4-ին ճապոնական «Խոխոլո» առետրական ֆիրմայի գրասենյակում, վոր գտնվում եր Վլադիվոստոկում, մի առեղծվածային սպանություն տեղի ունեցավ։ Անհայտ չարագործներն առանց վորեւ պատճառի սպանեցին յերկու խաղաղ ճապոնացու և մեկին ել վիրավորեցին։

Իրականում այդ սպանությունն ամենեվին ել առեղծվածային չեր։ Այդ վոճարագործությունը կատարեցին վարձված մարդասպանները, վորոնց ուղարկել եյին ճապոնական գեներալները։

Ճապոնական զինվորականությունն ամբողջ աշխարհում հայտնի յե նրանով, վոր նա իր հափշտակողական նպատակներին հասնելու համար չի խորշում ամենաստոր միջոցներից։ Նա այժմ այդպես է վարվում Զինաստանում։ Նա այդպես վարվեց նաև այն ժամանակ։ Նա մարդիկ ուղարկեց հենց իրենց հայրե-

1095  
39



նակիցներին սպանելու, վորպեսզի առիթ ունենա  
վիճորական դեսանտ իջեցնելու մեր ափը:


Ճապոնական եսկաղըրայի հրամանատարը խորհըր-  
դային իշխանությանը մեղադրում եր այն բանում,  
վոր նա, իբր թե, չի կարողանում ապահովել Վարդե-  
վոստոկում յեղած ճապոնական քաղաքացիների կյան-  
քի ու գույքի անվտանգությունը: Հետևյալ որը ճա-  
պոնական նավերից մակույկներ իջեցվեցին և ճապո-  
նական նավաստիներն ու զինվորները քաղաքում ափ  
իջան:

Այդ ժամանակ Սիրիրի մեծ յերկաթուղով, սկսած  
Պենզայից, Ուրալի ու Սիրիրի բոլոր խոշոր քաղաք-  
ների վրայով դեպի Վարդեվոստոկ եյին շարժվում  
չեխոսլովակների զինված ջոկատները:

Այն ժամանակ, յերբ Ռուսաստանը Գերմանիայի  
ու Ավստրիայի դեմ պատերազմ եր մղում, չեխոսլո-  
վակները գտնվում եյին Ավստրիայի տիրապետու-  
թայն տակ: Հասկանալի յե, վոր նրանց համար ձեռ-  
նըսու չեր կովել իրենց ստրկացնող Ավստրիայի ող-  
տին, ուստի և նրանք կամովին դերի եյին ընկնում  
ուսուներին: Հոկտեմբերյան հեղափոխությունից քիչ  
առաջ դերի ընկած չեխոսլովակներից ստեղծվել եր  
մեկ զինված կորպուս: Յարական Ռուսաստանի ռազ-  
մական դաշնակիցները մտածում եյին այդ կորպուսն  
ոգնության ուղարկել ֆրանսիացիներին, հարձակող  
գերմանացիների դեմ կովելու համար: Հոկտեմբեր-  
յան հեղափոխությունը խանգարեց այդ տեղափոխու-  
թյունը:

Խորհրդային կառավարությունը, կատարելով բան-  
վորների ու գյուղացիների կամքը, հրաժարվեց իմպե-  
րիալիստների հափշտակողական պատերազմին մաս-  
նակցել և Գերմանիայի հետ հաշտություն կնքեց: Նա  
չեխոսլովակներին առաջարկեց Վարդեվոստոկով վե-  
րադառնալ իրենց հայրենիքը:

Այն ժամանակ Անդլիայի ու Ֆրանսիայի կառա-  
վարությունները վճռեցին չեխոսլովակներին ողտադոր-  
ծել Ռուսաստանում, խորհրդային իշխանության դեմ:



Նրանք կաշառեցին չեխական հրամանատարությանը. չեխ գեներալներն ու սպաներն իրենց զինվորներին հավատացնում եյին, թե իր՝ խորհրդային իշխանությունը պատրաստվում է նրանց վերադարձնել ավատրիական բանակը, վորտեղ նրանց, պատերազմի ժամանակ Ռուսաստանի կողմն անցնելու համար, մահվան պատիժ ե սպասում:

Խաբված չեխ զինվորները իրենց և ոռւս սպիտակ զգվարդիական սպաների զեկավարությամբ ամբողջ Սիբիրում հանդես յեկան ընդդեմ ոռւս բանվորների ու գյուղացիների: Նրանց ոգնում եյին ինտերվենտները՝ անդիմացիք, Փրանսիացիք, ճապոնացիք և մյուսները:

Կարմիր գվարդիան հերոսարար պաշտպանում եր հայրենի յերկրի յուրաքանչյուր թիզը: Սակայն այն ժամանակ Սիբիրում կարմիր գվարդիան սպիտակիվ եր և վատ զինված: Անան դեմ ամբողջ Սիբիրում և Հեռավոր Արևելքում հաստատվել եր սպիտակների իշխանությունը: Ինտերվենտներն այդ իշխանության կանգնեցրին ցարական հին աղմիքալ (ծովակալ) Կոլչակին:

Խորհրդային Ռուսաստանը սեղմված եր ինտերվենտների կրակե ողակի մեջ: Սիբիրի կողմից սեղմում եյին ճապոնական, չեխական, լեհական, անդիմական, իտալական և այլ զորքերը: Այսուղի առանձնապես մեծ եր ճապոնական զորքը: Հյուսիսում՝ Արխանգելսկելում ափ եյին իջել անդիմացիք, Փրանսիացիք և ամերիկացիք: Հարավում՝ Ուկրայում՝ Փրանսիացիք, լեհերն ու Հունացիները, Ռւկրաինայում՝ մոլեզնում եյին գերմանական զորքերը, Բագրում՝ անդիմացիք: Նրանց ոգնությամբ նախկին ռուսական կայսրության բոլոր ծայրամասերում ստեղծվում եյին սպիտակ-զվարդիական կառավարություններ— Կոլչակի, Յուզենիչի, Չայկովսկու, Պետլյուրայի, Դենիկինի, Վրանգելի, Վրացական մենչեվիկների, Հայկական դաշնակների,

Թուրքական մուսաֆաթականների<sup>1)</sup> կառավարությունները:

Այս բոլոր սպիտակ բանակներն արշավանքով շարժվեցին գեղի կարմիր Մոսկվա:

Իսկ Վլադիմիրոստոկ՝ ամեն որ նորանոր ոտարերկը յարքի եյին գալիս: Գիշեր-ցերեկ փողոցներում սուրում եյին զինվորական ավտոմոբիլներ ու մոտոցիկլետներ: Զենքերը զրնդացնելով, թմբուկները թնդացնելով, փողերը, չեփորները, պարկապղուկներն ու կլարնետները հնչեցնելով անցնում եյին ինտերվենտների այլազան խիտ զորացյունները— ճապոնացիք, չեխերը, անդիմացիք, Փրանսիացիք, ամերիկացիք, իտալացիք, սերբերը, ոռումինները, լեհերը:

Հրապարակներն ու փողոցները կարծես տրաքվում եյին բազմացեղ զորամասերի զորահանդեսներից: Նավամատուցներում ու կայարաններում դղբդոց եր, վոր առաջանում եր ուղամական հանդերձանք բեռնաթափելուց ու բարձելուց: Ոտարերկը յիթիսարի նավերը մեկնում եյին ծանրաբեռնված մեզնից հափշտակած յերկաթով, հանքով, անտառանյութով, ձկնով:

Թերթերը հաղորդագրություններ եյին տպագրում բոլցեվիկյան կոմիսարների գնդակահարությունների մասին, վորոնք, վորպես թե տեղի եյին ունեցել նրանց փախուստի վորձ անելու ժամանակ, կամ ուղամաղաշտային դատարանի դատավճռով:

Հեռավոր Արևելք ամենից շատ զորք լցրեց ճապոնիան—մինչև հարյուր հիսուն հազար մարդ: Պրիմորյեյի, Պրիմուրյույյի, Ամուրի ու Անդրբայկալի բոլոր քաղաքներում ու յերկաթուղային բոլոր կայարաններում ճապոնական կայազորեր եյին կանգնած: Ճապոնական զորքերն ափ իջան նաև Հյուսիսային Սախալինում և Ամուրի Նիկոլաևսկում:

Ճապոնիան արդեն վազուց եր յերազում հափշտակակել, իր ձեռքը գցել հեռավոր Արևելքը, վոր հա-

1) Հակահեղափոխական կուսակցություններ Վրաստանում, Հայաստանում և Աղրբեջանում:

բուստ և ածուխով, նավթով, ջանքով, փայտանյութով, ձկնով, ինչպես և ամրողջ Սիրիը՝ մինչեւ Ռւրալ։ Սակայն նա այդ բանը բացարձակ կերպով անել չեր կարող։ Մյուս պետությունները, հատկապես Ամերիկան, վախենում եյին, թե այդ ճապոնիային, իրենց համեմատությամբ, չափից ավելի կուժեղացնի։ Այդ պետություններն իրենք ել յերազում եյին վորեւ ոգուտ քաղել մեզանից։

Ճապոնիան գիտեր այդ տրամադրությունները։ Նա վորոշեց խորամանկություն անել, ձևացնել, թե ինքը մի կողմ է քաշվել, բայց միևնույն ժամանակ բոլորից շատ կողոպտել։ Սպիտակ-գվարդիական թափթփուկներից նա ընտրեց յերկու կապը կտրածների՝ Զիտայում ատաման Սեմյոնովին և Խարարով-սկում՝ ատաման Կալմիկովին։ Գործիք դարձած այդ յերկու մարդիկ սկսեցին իրենց ներկայացնել վորպես «ռուսական» սպիտակ իշխանություն, սակայն ամեն ինչ անում եյին ճապոնիայի հրահանդներով։ Ճիշտ այնպես, ինչպես այժմ անում է ճապոնացիների կողմից հափշտակված Մանջուրիայում նրանց նստեցրած Պու Ի կայսը։

Վորպեսզի բոլորը պարզ պատկերացում ունենան այդ ատամանների մասին, խոսք տանք ամերիկացի գեներալ Գրեվսին։

Գրեվսն ինքն ել պայքարում եր բոլշևիկների դեմ։ Նա հեռավոր Արեվելքում ամերիկական ինտերվենտական գորքի պետն եր։ Բայց, ահա թե նա ինչ ե գրում, որինակ, ատաման Սեմյոնովի մասին։

«Սեպտեմբերին ինձ մոտ յեկավ Սեմյոնովը, վորը հետապայում հանդիսացավ մարդասպան, կողոպտիչ և ամենանուղղելի մի սրիկա։ Սեմյոնովին պահում եր ճապոնիան։ Նա վոչ մի համոզմունք չուներ, բացի այն գիտակցությունից, վոր իրեն անհրաժեշտ է գործել ճապոնիայի հրահանք։ Ներով։ Նա շարունակ մնում եր ճապոնական գորքերի տեսադաշտում, նա այդպես եր վարվում, վորովհետեւ, յեթե ճա-

պոնիայի աջակցության վրա չհենվեր, մի շաբաթ ել չեղ կարող դիմանալ։»

Ահա թե նույն գեներալ Գրեվսն ինչ ե գրում առաման Կալմիկովի մասին։

«Խարարովսկիում յես առաջին անգամ հանդիպեցի այդ նշանագործապանին, ավազակ ու կապը կտրած կալմիկովին։ Կալմիկովն ամենածայրահեղ սրիկա յեր, վորպեսին յես յերեկոց հանդիպել եմ։ Յեվ յես լրջորեն մտածում եմ, վոր յեթե մարդ ուշի ուշով թերթի բառարանը, նայի զանազան վոճրագործություններ ցույց տվող բոլոր բառերը, ապա հաղիվ թե գտնվի այնպիսի վոճրագործություն, վոր Կալմիկովը գործած չլինի… Սեմյոնովի ու Կալմիկովի զինվորները, գտնվելով ճապոնական զորքերի պաշտպանության տակ, հեղեղում եյին յերկիրը վայրի գաղանների պես, կոտորում ու կողոպտում եյին ժողովրդին։»

Սեմյոնովի բանտում տեղի ունեցած մահապատիժներին ականատեսներից մեկը գրում ե.

«Կոտորում եյին բակում… Այդ, ի հարկե, արվում եր գեղեցիկ… Նրանց, վորոնց թրերով եյին կոտորում, մեռնելուց հետո տանում եյին ինզուլու գետը սառուցի ճեղքով ջուրը գցում, իսկ ում վոր գնդակահարում եյին, գնդակահարելու համար տանում եյին բլուրի գլուխը, սպանում ու թողնում, վոր գայլերը հոչուեն։ Սակայն քչերին եյին գնդակահարում։ Վամփիուշն ափսոսում եյին, իսկ թրով կոտորելուց մեծ բավականություն եյին ստանում… Այսպես, ձեռնաբակալվածներից մեկը, շատ առողջ մի մարդ, չնայած այն բանին, վոր նրան սուկալի ուժով խփեցին թրի տափակ կողմով, լուս մնաց։ Այն ժամանակ սկսեցին ահապին մահակներով խփել նրա գլխին, նա չդիմացավ ու գոռաց։ Դրանից հետո դահճիճ նավրողսկին սկսեց սլիմի ծայրով նրա կուրծքը ծակծելով գրել «բոլշևիկ-կոմունիստ» բառերը։ Այդ գործը վերջացնելուց հետո նա ծակծկված կրծքին ինչ-վոր բան քանց, վորից նրա կուրծքն անմիջապես ուռավ։»

Կալմիկովի ձեռքից ազատված մի ուրիշ ականատես պատմում ե.

«Ինձ նետեցին մի վանդակի մեջ։ Այդ վանդակներից յու-

բաքանչյուրի մեջ 12 մարդ եր նստած... Սոսկալի նեղվածք այդ վանդակում իրար սեղմած, զոտարորիկ, միայն սպիտակելեն հաղներին նստած եյին գեռևս կենդանի ընկերները... Զեր անցնում մի ժամ, զոր վորեն մեկին վանդակներից դուրս չբերեն և բոլորի աչքի առաջ տանջանքների չենթարկեն: Անհաշիլ ծեծում եյին յեղան ջղերից պատրաստուծ մարակներով, աղա ծեծած տեղերին յեռացող ջուր լցնում ու վրան աղ ցանում: Վանդակներում մեռելահոս եր կամդնած, մարմնի կտրուած տեղերը թարախակալում եյին ու վորդնում: Զերբակալվածներին վորպես սնունդ տրվում եր տաք ու աղի ջուր, բոլորը տանջվում եյին անտանելի ծարավից և պատրաստ եյին մի կաթիլ ջրի համար մեռնելու...»

Յեվ ահա, այդ հրեշներին, մարդկային կերպարանքը կորցրած այդ անձանց ձապոնիան նատեցրել եր վորպես չեռավոր Արեւելքի բանվորներին ու գյուղացիներին «կառավարողներ»:

Ասենք, հենց ինքը՝ ճապոնական դինվորականությունն ել իրեն ավելի լավ չեր պահում:

Նույնիսկ մեր թշնամին՝ անդիմական գնդապետինությունը Ռուսական Շատրվանի թագավորությունը առաջիկ ճշմարտությունը ճապոնական ինտերվենտ մասին:

Նա դրում եր.

«Նրանք ծայրահեղ արհամարհանք եյին զգում դեպի առև ժողովուրդը: Նրանք այդ թշվառ մարդկանց ցած եյին նետում գնացքների բաց վաղոններից, գործի դնելով իրենց հրացաների խակոթերն ինչպես տղամարդկանց, այնպես ել կանաց նկատմամբ, նրանց հետ վարվում եյին ծիշտ այնպես, ինչպես նվաճված հոտենտոտների ցեղի հետ»<sup>1)</sup>:

1) Հոտենտոտները հարավ-աֆրիկական մի ժողովուրդ է, զոր յեվրոպացիների կողմից ստրկացնելու հետեւանքով մասմբ վոշչացել ե, մասմբ խառնվել ուրիշ ցեղերի հետ: Յեվրոպացիք հոտենտոտներից խիլ են նրանց պատկանող հողերն ու հարստաթյունները և փաստորեն նրանց դարձրել են իրենց ստրուկները

Որինակ՝ Սվիյագինո կայարանում ճապոնացիք կախել եյին այսպիսի մի հրաման.

Դուրս ժաղաքացին ճապոնացիների կողքով անցնելիս անդայման պիտի ե նրանց գլուխ տա՝ ձեռքը զլիարկի հովարին մոտեցնելով կամ զլիարկը վերցնելով:

Չհապատակվելու ամեն մի փորձի համար ճապոնական զինվորականությունը հրդեհում եր ամբողջ գյուղերը: Սյապիսով հրդեհեցին Ամուրի մարզում իվանովկա գյուղը: Կրակից ու զանազան տանջանքների յենթարկվելուց իվանովկայում զօն՝ գնացին մոտ յերեք հարյուր մարդ, վորոնց մեջ կային նաև կանայք ու յերեխաներ: Նողիալի մարդասպանները չխնայեցին նույնիսկ ծերերին. զոհվածների մեջ մեկը բոլորովին զառամյալ ծերունի յեր—96 տարեկան, իսկ մեկը խուլ ու համբ եր:

Այդ գյուղում ճապոնացիք յերեսուն գյուղացու քեցին շտեմարանը ու կրակ առվին: Մարդիկ սկսեցին կենդանի-կենդանի այրվել: Աւժերի անասելի լարումով այդ նահատակները ձեռքերով բարձրացրին շտեմարանի տանիքը: Գերանների մեջ յերեվացին այլանդակված դեմքեր՝ այրվող մասերով ու մորուքներով: Բայց բոլորին, ովքեր փորձում եյին դուրս պրծնել այնտեղից, ճապոնացիք հնձեցին գնդացիրով:

Ի հարկե, այս բոլոր զագանությունների համար մեղավոր են ճապոնական կապիտալիստները, բարոնները, սպանները: Նրանք ճապոնական խավար գյուղացու գլուխը շշմեցնում եյին բոլցեվիկների մասին հորինած ամեն ակսակ սակերով և իրենց զինվորներին բռնի ուժով քշում մեր գեմ:

Մեր յեղբայրները՝ ճապոնացի կոմունիստները, առաջավոր բանվորները պայքարում եյին ինտերվենցիայի գեմ: Քիչ հուզումներ չեյին լինում նաև ճապոնական զինվորների մեջ, գործնք չեյին ցանկանում կոտորել իրենց յեղբայրներին՝ ուսւ բանվորներին ու գյուղացիներին:

Սակայն ճապոնական զինվորականությունն այդ-պիսի զինվորներին զինաթափ եր անում ու կոտորում։ Ճապոնական զինվորականությունը «բոլշևիկյան վարակից» ավելի յեր վախենում, քան կրակից ու յերկրաշարժից։

Կեղեքելով աշխատավորությանը՝ ճապոնիան ըսկըսեց իր ձեռքը գցել մեր ժողովրդական հարստությունը։

Ճապոնական արդյունաբերողներն սկսեցին անարգել կերպով ձուկ վորսալ մեր ըոլոր ծովերում, սկսած Վլադիվոտովկից մինչև Կամչատկա, ինչպես և Ամուր գետում։ Մեր նշանավոր հեռավոր-արևելյան տառեխի վորսի մեծ մասը նրանք փոխադրում եյին ճապոնիա։ Ճապոնական արդյունաբերողները կողոպտում եյին մեր անտառային հարստությունը։ Նրանք ամեն տարի վիթխարի քանակությամբ, մոտ մեկ միլիոն խորանարդ ֆուտ փայտեղեն եյին արտահանում Հեռավոր Արևելքից ճապոնիա։

Նրանք կապարի անվան տակ հափշտակեցին մեր ածխահանքերը, յեկաթահանքերն ու վոսկու հանքերը։

Նրանք ամբողջապես հափշտակեցին Հյուսիսային Սախալինը, վոր հարուստ և նավթով ու ածխով։

Թաթարական նեղուցում, Սախալինի հյուսիսային ծայրի և Ամուրի գետաբերանի արանքում գըտնըլում են Ուդդ, Լանգը և Կեվոս կղզիները։

Այդ կղզիներում ապրում են նիվիսի ժողովուրդը։ Այդ կղզիները ևս, իրենց հիանալի ձկնարաններով, հափշտակեցին ճապոնացիները։

Այս, ահա թե մեր ժողովուրդն ինչպիսի վիթխարի զոհեր տվեց ու զրկանքներ կրեց ճապոնական ինտերվենցիայի հետեանքով։



Պարտիզանների կոկը ճապոնական զորքի հետ՝ Հեռավոր Հեռավոր Արևելյան գործում։

ՍԵՐԳԵՅ ԼԱԶԱՐ

Այժմ բոլորը գիտեն, վոր մեր սոցիալիստական հայրենիքի դեմ սկսած կաղիտավայուսուների համաշխարհային արշավը վերջացավ նրանց խայտառակ պարտությամբ և ուս ողիտակ-զվարդիականների լիակատար ջախջախումով։

Թշնամու դեմ մզած մարտերում ստեղծվեց ու ամրացավ մեր անպարտելի Կարմիր բանակը։ Նա սկսեց մեկը մյուսի հետեւից դուրս մղել կուչակին, Դենիկինին, Յուդենիչին, Վուդենիչին, Վրանգելին, սպիտակ լեհերին և բոլորին, ովքեր կային այնուղ։ Յեթե մի վորեն ուղածակատում դրությունը ծանրանում եր, կենին այնուղ եր ուղարկում իր հավատարիմ աշակերտին՝ աննկուն Ստալինին։ Յեվ արխասիրտ Ստալինը, վոր մինչ այդ յերբեք զինվորական չեր յեղել, միշտ ել կարողանում եր ըեկում ստեղծել, և Կարմիր բանակը ջախջախում եր թշնամուն։ Մարտերի հրի մեջ կոփ-զում եյին ամրող աշխարհին հայտնի մեր բանվորացյուղացիական դորավարները՝ մարշալներն ու հրամանատարները և նրանց մեջ՝ ամրող ժողովրդի կողմից սիրմած՝ առաջին կարմիր բանակայիններից առաջինը, Լուգանսկի մականազործ Կրիմ Վորոչիլովը։

Անգլիացի զնդապետ Ռուբը մի բանում խիստ սխալվեց. մեր հայրենիքի բանվորներն ու գյուղացիները ամենեին չնմանվեցին նվաճված հոտենտոտների ցեղին։

Բոլշևիկների կուտակցության ղեկավարությամբ շեռավոր Արեւլքի բանվորներն ու գյուղացիները պարտիզանական համառ կոխվ մղեցին սպիտակների ու ճապոնացիների դեմ։

Անանցանելի յեռներում ու անտառներում եյին ստեղծվում պարտիզանական այդ մարտական ջոկատները։ Զմեռվա սառնամանիքին ու ամառվա շոգին, ձյունի ու անձրեխ տակ, յերբեմն առանց մի կտոր հացի, խաղողի տերևներով, սունկերով, յեղենու կոծոծ-



Ընկեր Սերգեյ Լազար

ներով անվելով եյին արշավում խիղախ պարտիզան-ները։ Նրանք անակնկալ կերպով հարվածում եյին թշնամու թիկունքին, ավերում յերկաթուղիները, պայթեցնում սպիտակներով ու ճապոնացիներով լեցուն գնացքները։ Ծովամերձ մարդի պարտիզանական հրա-մանատարների մեջ, վորակես բոլորի կողմից ճանաչված առաջնորդ, աչքի յեր ընկնում նշանավոր բոլցնիկ Սերգեյ Լազոն։

Ինձ՝ սույն գրքույկի հեղինակիս վիճակվեց Սեր-գեյ Լազոյի հետ ծանոթանալ 1919 թվի փետրվարին։ Այդ ժամանակ Լազոն աշխատում եր ընդհատակյա, Վլադիվոստոկ քաղաքում։

Յես աշխատում եյի վորակես կուսակցության շար-քային անդամ, կատարելով ամեն տեսակ մանր հանձ-նարարություններ։ Ինձ հայտնի յեր, վոր կա այդպի-սի մի խոշոր աշխատող՝ Սերգեյ Լազոն, վոր մյուս բոլցեվիկների՝ չուրելմանի ու Ռայեվի հետ ապրում ե Վլադիվոստոկի մոտ մի ձմեռանոցում, անտառի մեջ։


Նրա մասին շատ հետաքրքրական պատմություն-ներ եյին անում։

Մի անգամ նա ձմեռանոցից դուրս յեկած ելինում և յերկար ժամանակ — մի քանի որ չի վերադառնում։ Նրա ընկերներն արդեն սկսում են հուզվել։ Յեվ հան-կարծ, անսպասելի կերպով լսում են, վոր անտառում ճրթճրթոց ե լավում և ինչ-վոր մեկը յերգում ե։ Այդ լազոն ե լինում, վոր գալիս ե մի ծանր վատարան շա-լակին ու յերգում ե։

Ցրտից յես չեմ վախենում,  
Վառարանին եմ կացում...

Պարզվում ե, վոր նա վառարանը դուրս ե քաշել յերկաթուղուց, հենց սպիտակների քթի տակից։ Այ-թե ուրախանում են նրա ընկերները։ Զե՞ վոր ձմեռա-նոցում խիստ ցուրտ եր նրանց համար։

Յեվ ահա, փետրվար ամսին ինձ հանձնարարեցին հին բոլցնիկ Դելվիդին իր բնակարանից առաջնորդել դեպի բանվորական ավան, վորտեղ նա թագնվում եր մի յերկաթուղային բանվորի բնակարանում։ այց



Վարդիկանինը ավերում են յերկաթուղայինը։

բանվորը ևս բոլցեիկ երև կոչվում եր «քեռի Միտյա»։  
Դելիքոք ծագումով ուրիշ տեղացի յեր և Կլադիովոս-  
տոկի տեղադրությունը չգիտեր։

Դելիքիին յես առաջնորդում եյի ուշ յերեկո-  
յան։ Բավական ցուրտ եր։

Քեռի Միտյան դրազեցնում եր մեկ սենյակ, իր  
մի ընկերոջ հետ, վորը նույնպես բոլցեիկ եր ու յեր-  
կաթուղային։

Յերբ մենք նրանց մոտ յեկանք, սենյակում արգեն  
մեծ բազմություն կար։ Յես շատ հին բոլցեիկների  
ճանաչում եյի զեռ չեխոսլովակների տպատամքությու-  
նից ել առաջ։ Չնայած սոսկալի մորուքներին, վորոն-  
ցով յես տեսա նրանց, այնուամենայնիվ իսկույն ճա-  
նաչեցի Գուբելմանին, Ռայելին և մյուսներին։

Սակայն յես հատուկ ուշագրություն դարձրի  
մի տպավորիչ դեմքի վրա։ Դա րարձրահասակ, ամ-  
բակազմ մի մարդ եր, վորն, ըստ յերեսութին, Փիզի-  
կական մեծ ուժի տեր եր։ Յերիտասարդական սեւգան-  
դուր մորուք կար նրա թուխ դեմքին։ Նրա խոշոր աչ-  
քերը փայլում եյին խելացիորեն։ Ունենալով այդուխի  
բացառիկ արտաքին, նա ինձ զարմացրեց իր արտա-  
կարդ համեստությամբ, նույնիսկ զսպվածությամբ։  
Սակայն նրա ձայնը վճռական եր, ուժեղև կարծես չեր  
սազում նրա զսպվածությանը։ Նա փոքր ինչ զադա-  
սում եր<sup>1)</sup>, բայց այդ նրա ձայնին մի առանձին գրավ-  
չություն եր առաջ։

Պարզվեց, վոր քեւի Միտյայի բնակարանում հա-  
վաքվել ե բոլցեիկների ընդհատակյա կոմիտեն։ Բայց,  
այ դժբախտությունն ինձ չեր կաբելի այնտեղ մնալ։  
Ընդհատակյա աշխատանքի պայմաններում հար-  
կավոր ե լինում շատ բան զաղտնի պահել կուսակցու-  
թյան շարքային անդամներից։ Դնալ ել չեյի կարող.  
չե՞ վոր նիստից հետո յես պետք ե Դելիքիին հետ տա-  
նեյի։ Իսկ Դելիքը հետու յեր ապրում—քեռի Միտյա-



1) Զադասել՝ նշանակում ե խոսելիս գ հնչյունը արտասա-  
նել դի նման։

յի բնակարանից մի վեց կիլոմետրի վրա: Բոլորը կարծես փակուլու մեջ ընկան: Իմ հորեղբոր վորդի իգոր Սիրիոցն ինձ առաջարկեց դուրս գնալ փողոց և այնաեղ սպասել, բայց ցուրտ եր:

Այստեղ մի բոլուսիկուհի, վոր բարեսիրտ ու սքանչելի ընկեր եր, ասաց.

— Իսկ ի՞նչ կլինի, յեթե մենք նրան պառկեցնենք քեռի Միտյայի անկողնում և կուսակցական դիսցիսդիմայի կարգով ստիպենք քնել:

Այս առաջարկությունը բոլորին ել շատ դուր յեկավ: Ինձ պառկեցրին քնելու: Յես պառկեցի յերեսս դեպի պատն արած և, իհարկե, վոչ մի բոպե չքնեցի, այլ լսեցի ամբողջ ժողովը:

Այստեղ յես լսեցի Սերգեյ Լազոյի զեկուցումը: Պետք ե ասել, վոր այդ զեկուցումն ինձ հիացրեց: Մինչ այդ յես շատ զեկուցումներ եյի լսել: Բայց Լազոն խոսում եր շատ պարզ, հակիրճ ու վորոշակի: Ինձ թվում եր, թե նա կարդում ե: Յես պառկած եյի յերեսով դեպի պատը և նրա շարժ ու ձեերը տեսնել չեյի կարող, լսում եյի միայն ձայնը: Սակայն իմ ամբողջ կյանքում յես չմոռացա այդ ձայնը:


Յերկու-յերեք ամիս հետո յես Սերգեյ Լազոյին հանդիպեցի արդեն պարտիզանական ջոկատներում, ծովամերձ մարզի Սուչանի շրջանում:

Այժմ Սերգեյը հագած ուներ զինվորական շինել, հագուստ ու կոշիկներ, վորոնցից նա չբաժանվեց մինչև մահը:

Նա զարմանալի քաջասիրտ եր: Կովի մեջ, յերբ չորս կողմը գնդակներն եյին սուլում, նա յերբեք իր սառնասրտությունը չեր կորցնում: Նա իրեն այնպես եր պահում, կարծես իր համար վոչ մի վտանդ չկար: Վոչ վոք չեր կարողանում լազոյի պես թշնամուն խարել, անցնել նրա թիկունքն ու ձրջապատել:

Հաղթանակի ժամանակ նա յերբեք չեր զոռոզանում, իսկ դժվարին բոպեներին ամենեին չեր վհատվում:

Բնությունը նրան ոժտել եր բազմապիսի տա-




զանդեքով։ Նա հիանալի շախմատիստ էր, ժաթեմատիկոս, լավ հասկանում էր գյուղատնտեսությունից, հետաքրքրվում էր բժշկականությամբ։ Յեզ հեռավոր Արևելքի բոլոր աշխատավորները հիշում են նրա արտասովոր համեստությունը, վորի վրա յես ուշադրություն դարձրի իմ առաջին հանդիպման ժամանակ։

Ճիշտ այն ժամանակ, յերբ Լազոն գնաց պարտիզանության, նրա կինը՝ Ոլգան, վոր նույնպես բոլցելիկ էր, մի աղջիկ տնեցավ։ Յերկար ժամանակ Լազոն չեր կարողանում կնոջը հանդիպել և իր փոքրիկ աղջկան տեսնել։ Վերջապես կինը փախստականի կերպարանքով, կուսակցական հանձնարարություններով գնաց մի գյուղ, վոր գտնվում էր սպիտակների ձեռքում։ Սերգեյ Լազոն զաղտնի մտավ այդ գյուղը և գտավ այն խրճիթը, վորտեղ ապրում էր իր կինը։ Կինը կարողացավ նրա բուռը խցկել աղջկա լուսանկարը։ Յերբ Լազոն գուրս գնաց, Ոլգան ևս խրճիթից դուրս յեկավ ու սկսեց քայլել շավզով, հույս ունենալով, թե Լազոն մի փորհե տեղ իրեն սպասելիս կլինի։ Յեզ իսկապես, նա թվերի մեջ կանգնած լուցկի յեր վառում ու դիտում էր աղջկա նկարը։ Նրա դեմքին յերջանկություն էր փայլում։

Նրանք հրաժեշտ տվին։ Հենց մյուս որը Սերգեյ Լազոն կոխվ գնաց։ Նա հեղափոխությանն էր տալիս իր ամբողջ կյանքը, իր ամբողջ անձը։ Իր այդ հատկությունների համար նա վայելում էր գյուղացիների ու բանվորների անսահման սերը։

Հեռավոր Արևելքի աշխատավորության ապրատամբությունը, վորին ղեկավարում ելին բոլցեվիկները, տապահեց ատաման կալմիկովի իշխանությունը։ 1920 թվի հունվարի 31-ին պարտիզանները գրավեցին Վլադիվոտոկը, ապա՝ շուտով նաև Խաբարովկը։ Առաման Սեմյոնովն ելի մի վորոշ ժամանակ դիմացավ Զիտայում, սակայն ինտերվենաների մեծամասնությունը հասկացավ, վոր գործը տանուկ տրված




Պահանջանելու պարուիլուն

ե և պոչները քաշեցին։ Մնացին միայն ճապոնացիք։  
Պարտիզաններն այնքան մեծ ուժեր չունեյին,  
վոր կարողանային ճապոնացիներին ևս ստիպել հեռա-  
նալ Հեռավոր Արևելքից։ Այնպիսի դրություն ստաց-  
վեց, վոր ծովամերձ մարզի խոշոր քաղաքներում կանգ-  
նած եյին միաժամանակ և՛ մեր կարմիր կայազորները,  
և՛ ճապոնական կայազորները։ Ճապոնական ուժերի  
հրամանատար գեներալ Ոոյը հայտարարեց, թե ճա-  
պոնացիք այլիս չեն խառնվելու ոռւսական գործերին,  
սակայն, ինչպես հետո պարզվեց, ճապոնական գենե-  
րալը կրկին ու կրկին անդամ խաբեց աշխատավորու-  
թյանը։

1920 թվի ապրիլին, մի գարնանային ճառախլա-  
ռատ գիշեր ճապոնական զորամասերը դավաճանաբար  
հանկարծակի հարձակվեցին մեր կայազորների վրա։  
Ամբողջ գիշերը կարմիր բանակայիններն առյօւծների  
նման կուլում եյին նենդ թշնամու դեմ։ Սակայն ճա-  
պոնացիք ավելի բազմաթիվ եյին, նրանք ավելի լավ  
եյին զինված։ Կարմիր զորամասերն ստիպված յեղան  
նահանջել։

Այդ գիշեր, ապրիլի 4-ի լույս 5-ի գիշերը ճապո-  
նացիներին գերի ընկավ Պրիմորյեյի կարմիր բանակի  
հերոս հրամանատար Սերգեյ Լազոն։ Նրա հետ միա-  
սին գերի ընկան Ռազմական խորհրդի անդամ, իր ըն-  
կերներ՝ Վանվոլոդ Սիրիբեգը և Լուցկին։ Լազոն, Սի-  
րիբեգեվն ու Լուցկին անհետ կորան։ Աշխատավորու-  
թյան բուռն բողոքներին անարդ արնախում գեներալ  
Ոոյը պատասխանում եր, թե ինքը Լազոյի մասին  
վոչինչ չգիտի։ «Լազոն, Սիրիբեգեվն ու Լուցկին յեր-  
բեք գերի չեն յեղել ճապոնացիների մոտ», պատաս-  
խանում եր նենդավոր գեներալ Ոոյը։ Անպատկառ  
առևտ։ Լազոյին գերության առաջին որերը տեսել եր  
վորպես ծանոթ յեկած նրա կինը։ Սիրիբեգեվին այցելել  
եր նրա հայրը։ Շատ տարիներ հետո միայն, կաթիլ  
առ կաթիլ հավաքելով մի շարք վկաների ցուցմունք-  
ները և համագրելով փաստաթղթերը՝ հնարավոր յե-



զավ պարզել Լազոյի ու նրա ընկերների վողբերդական  
վախճանի ամբողջ ճշմարտությունը:

Այդ այդպես ե յեղել:

Մի մութ ու խավար գիշեր Ռւսսուրի կայարանը  
մտավ ճապոնացիներով լիքը մի զինվորական գնացք:  
Կառամատույցում նրան դիմավորեց սպիտակ-գվար-  
դիականների մի խոմք: Մի ջերմավագոնից ճապոնա-  
ցի զինվորները դժվարությամբ գուրս քաշեցին յերեք  
հատ մեծ պարկ և հանձնեցին կոլչակի բանակից մնա-  
ցած սպիտակ բանդիտներին: Պարկերի մեջ ինչ վոր  
բաներ եյին շարժվում: Սպիտակ գվարդիականներն  
այդ պարկերը քարշ տվին դեպի յերկաթուղու փակու-  
ղին, վորտեղ կանգնած եր ջեռուցած շոգեքարշը:

Նրանք կոպիտ կերպով շոգեքարշի բրիդադին  
հրամայեցին հեռանալ: Մեքենավարն ինչ վոր վատ  
բանի հոտ առնելով՝ թագնվեց սյաքավարի տնակի  
հետեւը, վորտեղից նա տեսնում եր շոգեքարշի ներսը:

Սպիտակները պարկերը քարշ տվին շոգեքարշի  
մեջ: Խմբի պետը թրով պատռեց պարկերից մեկը,  
վոր ամուր բռնել եյին մյուս սպիտակ-գվարդիա-  
կանները և շոգեքարշի հնոցի լույսով մեքենավարը  
ճանաչեց Մերգեյ Լազոյին:

Մերգեյ Լազոն վոտքերն ու ձեռքերը կապկալած  
վերջին կովի բռնվեց ստոր մարդասպանների հետ:  
Բռնելով նրա վոտքերից ու իրանից՝ սպիտակներն  
սկսեցին նրան հրել դեպի շոգեքարշի հնոցը, սակայն  
Լազոն կապկալած ձեռքերով հենվել եր հնոցի յեղ-  
րին: Սպիտակները չեյին կարողանում հաղթահարել  
այդ հսկային:

Այն ժամանակ նրանցից մեկը մի քանի անգամ  
նաղանով խփեց Լազոյի գլխին: Լազոն գիտակցությու-  
նը կորցրեց և նրան դցեցին հնոցի մեջ:

Լազոյի դեմ մղած պայքարը հոգնեցրեց դա-  
հիճներին: Մյուս ընկերներին, վորոնք, ինչպես արդեն  
կարող ենք յենթադրել, Սիրիոցեզն ու Լուցկին եյին,  
նրանք գնդակահարեցին հենց պարկերի մեջ և նույն-  
պես նետեցին հնոցը:

Մեքենավարը սոսկումից յերերալով, փախավ մա-  
հալատժի այդ սոսկալի վայրից:

Այսպես զոհվեց Հեռավոր Արևելքի պարտիզան-  
ների սիրելի հերոս Սերգեյ Լազոն:

Մերգեյ Լազոն զոհվեց, սակայն այդ չփրկեց աշ-  
խատավոր ժողովրդի թշնամիներին: Ելի յերկու  
տեղեց կյանքի ու մահվան արյունահեղ պայ-  
քարը ճապոնական ինտերվենտների ու սպիտակ գվար-  
դիականների դեմ: Հեռավոր Արևելքի աշխատավո-  
րությանն ողնության յեկավ մեր անպարտելի կարմիք  
բանակը:

Տեղի ունեցան Վոլոչայելի ու Սպասուկու անմո-  
ռանալի մարտերը, վորոնց մասին յերգեր են յերգվում:

1922 թվի հոկտեմբերի 25-ին մեր հայրենի հողում  
այլևս վոչ մի ճապոնական զինվոր չմնաց: Վլադիվոս-  
տոկ մտան կարմիք բանակի զորամասերը, վորոնց  
աշխատավորությունը խանդավառությամբ դիմավո-  
րեց: Հեռավոր Արևելքը, յերկրի այդ մարդարիտը  
դարձավ մեր հայրենիքի անբաժան մասը:

Իսկ 1925 թվին ճապոնացիք հարկադրված յեղան  
հեռանալ նաև Հյուսիսային Սախալինից:

Մարդկության հանճարը, ամբողջ աշխարհի աշ-  
խատավորության առաջնորդ, ուսուցիչ ու բարեկա-  
մը, մեր մեծ Ստալինը Խորհրդային Միության ժո-  
ղովուրդներին առաջնորդեց դեպի նորանոր հաղթա-  
նակներ: Յեվ անճանաչելիորեն կերպարանափոխեց  
մեր սիրելի հայրենիքը:

Մեր յերկրի ժողովուրդները համառ աշխատան-  
քով ու պայքարով ստեղծեցին աշխարհում չտեսնված  
ոոցիալիզմի հասարակարգ, հասան ԽՍՀՄ տնտեսական  
հզորության, նրա անկախության կապիտալիստներից:  
Հզոր կարմիք բանակը պաշտպանում է մեր սահման-  
ները: Հեռավոր Արևելյան Հայունական ուժը գիտե-  
ամբողջ աշխարհը: Այժմ վոչ մի թշնամի չի կարող  
անցնել մեր հայրենիքի սրբազն սահմաններից:

Կյանքը դարձել ե ազատ, ունեվոր ու յերջանիկ:

Ազատ ու ցնծալից են աճում պատանիներն ու յերեխաները մեր սոցիալիստական յերկրում:

Նշանակում ե՝ իդուր չեն զոհվել այնպիսի մարդիկ, ինչպիսին եր Սերգեյ Լազոն: Խորհրդային Միության հերոսները, ընկերներ Զկալովը, Բայդուկովը և Բելյակովը անվայրեջք թռիչք գործեցին Մոսկվայից Արկտիկայի վրայով մինչև Ռուդո կղզին, վոր Ամուրի Նիկոլաևսկ քաղաքի մոտ ե: Ի պատիվ այդ թռիչքի՝ Ռուդո կղզին վերանվանվել է Զկալով կղզի, հարեվան կանգր կղզին՝ Բայդուկով կղզի և Կեվոս կղզին՝ Բելյակով կղզի:

Մեր Ստալինը յերկիրը հասցրեց տեխնիկայի այնպիսի բարձր մակարդակի և դաստիարակեց այնպիսի մարդիկ, վոր այժմ մենք կարող ենք Մոսկայից առանց վայրեջքի թռչել այդ հեռու-հեռավոր կղզիները: Յեթե պահանջվի, Ստալինի կոչով մենք կարող ենք թռչել և կիմոչենք ել ավելի հեռու:

Յեվ այժմ նույնիսկ տարորինակ ե, վոր մի ժամանակ այդ սքանչելի կղզիները հափշտակել եյին ճապոնական իմպերիալիստները: Հապա՛, թող մի այժմ փորձեն:



Պատ խմբադիր՝ Հր. Մարգարյան  
Տեխ. խմբադիր՝ Ան. Գասպարյան  
Սրբադրէց՝ Վ. Ավագյան

Գլավլիտի լիազոր՝ Ա-4091. Հրատ. 4620.

Պատվեր 443. Տիրաժ 5000.

Թռւղթ. 62X94 Տպադր. 2 մամ.

Մեկ մամ. 24480 նշան. Հեղինակ.  $\frac{3}{4}$  մամ.

Հանձնված ե արտադրության 5 հունիսի 1938 թ.

Ստորագրված ե տպագրության համար 15 ոգոսառութիւն 1938 թ.



ԳԻԱԸ 60 Կ.

16981

А. ФАДЕЕВ  
Как погиб Сергей Лазо  
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.